

ՀՀ Կրթագծոտնի տարածքային կազմակերպության պատվիրակությունը մասնակցեց ՀՀ 15-րդ համագումարին

26.05.2014



ՀՀ Կրթագծոտնի տարածքային կազմակերպության պատվիրակությունը մասնակցեց ՀՀ 15-րդ համագումարին: Պատվիրակությունը բաղկացած էր 44 անդամից, որը ղեկավարում էր ՀՀ Կրթագծոտնի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահ, մարզպետ Սարգիս Սահակյանը:

Համագումարում մարզի պատվիրակության կողմից ելույթ ունեցավ Աշտարակի Սմբատ Շահազիզի անվան թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի Նարինե Մեսրոպյանը: Նա մի քանի հիմնախնդիրներ բարձրացրեց, որից մեկը վերաբերում էր կոոպերատիվների ստեղծման գաղափարին: Այն մարզում արդեն իրագործման ընթացքի մեջ է, ինչը միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու լուրջ խթան է: Մեկ այլ հարցադրումով առաջարկություն արվեց, որ կառավարության անդամները եւ ԱԺ պատգամավորները մարզ այցելություններ կատարեն ոչ միայն որոշակի անհրաժեշտություններից ելնելով, այլեւ հստակ ժամանակացույցով՝ ամիսը մեկ անգամ: Դա հնարավորություն կտա նրանց անձամբ իրազեկվելու տեղերում առկա խնդիրներին, եւ դրանց լուծման գործնական քայլեր կձեռնարկվեն: